

Թիւ 24257  
Փետր. 15, 1974

Հոգեշնորհ  
Տ. Ժիրայր Վրդ. Թաշմեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք Յունուար 29, 1974 թուակիր 2եր տեղեկագիրը, որով  
կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 27ին զուամարուած հա-  
մայնքիդ ծիական ժողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի չորս  
անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝  
կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծիական ժողովը տեղի ունեցած է Թեմա-  
կան Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծիական ժողովի ատենագրու-  
թիւնը, ծիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյդ  
ենթակայ մարմիններու վարչութեանց ատենապետներու անունը, հասցէն եւ  
հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
աիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Արմէն Քիւրքմեան  
Եղուարդ Էօտեմիշլեան  
Պետրոս Գոգորեան  
Մինաս Սէլեան